ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69,
(37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/1223-24 առ 04 06 2024թ.

«ԷՅՋ-ԴԻ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
տնօրեն
Ն. Զաքարյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-7/24-3-01/142 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Զաքարյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար համակարգչային տեխնիկայի և օժանդակ նյութերի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԷՅՋ-ԴԻ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մարտի 26-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-7/24-3-01/142 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Քանի որ Պայմանագրի Հավելված 1-ի 57-րդ չափաբաժնում ներկայացված քարթրիջը չի մատակարարվել և առաջնորդվելով պամանագրի դրույթներով՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԷՅՋ-ԴԻ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի միջև 2024թ. մարտի 26-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-7/24-3-01/142 պայմանագիրը 57-րդ չափաբաժնի մասով և առաջարկում եմ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (3 000 ՀՀ դրամ) և որակավորման (4 500 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91